զզուեցայ մարդիկներէն, եւ առանց քոսոտ, բորոտ ու վիրալից լինելու Հոբայ հետ՝ իրաւունք ունի ամէն մարդ անիծելու օրը հորում ծնաւ: Ահա Արծրունեաց եւ Մամգունեաց ճշմարիտ շառաւիղ մը՝ ե՛ս Գուրգէն՝ որդի Ապուպելճի, ես ազատ, ազնուատոհմ, որ իմ հայրենի ժառանգական երկիրս կը մտնեմ իբրեւ անազատ, իբրեւ գերի, իբրեւ ճորտ, որ չունի գլուխ դնելու տեղ մը, եւ բոլոր իմ ստացուածքս, իմ հարստութիւնս, իմ կալուածքս սա սուրը եւ սա ձին է… Այլ միթէ՞ նա, որ ինձ կը սպասեմ. Ահա միմիայն բարիք, միմիայն գանձ, միմիայն կեանք, դո՛ւ՝ իմս Հեղինէ: Ես, այո՛, երջանիկ եմ քան զաշոտ, եւ իմ Հեղինէն չեմ փոխէր Արծրունեաց իշխանին փառաւոր գահին հետ: Իմ Թորթումի փոքր բերդը իւր գեղեցիկ լճակով, իւր գետոց խոխոջներով, իւր պտղազարդ ծառաստաններով չեմ փոխէր Վասպուրական աշխարհի Վանայ մեծատարած բերդին, ծովակին, կղզիներուն եւ լայնարձակ անտառներուն հետ: Փոխանակ նախարարաց բազմագլխեան ապստամբութիւնքն հարուածելու, բազմապատիկ դաւաղրութեանց դէմ հնարքներ հնտրելու, տաճկաց անգութ սուրեր ու եւ բիւր խաբէութեանց դէմ միշտ արթուն գտնուելու, շատ աւելի կը նախադասեմ իմ խեղճուկ Թորթումի գիւղապետներս, իմ թեթեւամիտ յոյներս, որոնցմէ երբ յիմար չես եւ ուզես այն ատեն միայն կը խաբուիս: Այո, Հեղինէիս հետ ինձ համար ամէն տեղ երջանիկ կարելի է լինիլ: Ինչ ըսի իրեն, երբ թողի հայրենի երկիրը եւ գնացի: «Կամ այն է որ ես կը մեռնիմ, կամ այն է որ քեզ Ռշտունեաց Օրիորդ, կը դառնամ փոքրիկ գաւառ մը բերելու, ուր հեռի ի հոգոց եւ թախծութեանց մեր զրկեալ գլուխներն կարէնանք հանգչեցնել, հեռի եւ անտես այդ ազնուատոհմ ազգականաց, որ սպանութիւն, դաւ, սուտ վկայութիւն՝ վերջապէս ամէն անարգ միջոցներ չի խնայեցին յափշտակելու համար երկու որբոց հայրենի ժառանգութիւնը»:

«Ի՞նչ,— ըսաւ ինձ Աշոտ մեծ իշխանը, երբ վերջին այցելութեամբ իրմէ խնդրեցի, որ իմ հայրենի ժառանգութիւնս ինձ դարձնէ:— Ես լաւ համոզուած եմ թէ իմ պապս մեծ անիրաւութիւն մ՚ըրած է հայրդ սպաննելով եւ նորա երկիրները գրաւելով, բայց եթէ ամէն նախարար իւր կալուածոց անիրաւ մասը հարազատ տիրոջը դարձնէր մէկ